1. ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի կապակցությամբ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի՝ կալանքի կատարման նորմեր սահմանող դրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կալանքը կրելու կարգը և պայմաններն առավել խիստ են: Նշված կարգավորումներով հանդերձ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ ՀՀ քրեակատարողական հիմնարկներ այցերի և ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության ներկայացուցիչների կողմից քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկման այցերը վկայում են, որ գործնականում կալանավորված անձինք կամ դատապարտյալները նախընտրում են, որ որոշակի ժամկետով ազատազրկման պատժատեսակի փոխարեն իրենց նկատմամբ ընտրվի կալանքն: Առանձնազրույցների արդյունքում պարզվել է, որ այդպիսի նախընտրությունը պայմանավորված է նրանով, որ կալանքի համար, ի տարբերություն որոշակի ժամկետով ազատազրկման պատժատեսակի, նախատեսված է առավել կարճ ժամկետ: Այսինքն՝ չնայած առկա իրավունքների սահմանափակման, ազատությունից զրկված անձինք նախընտրում են պատիժը կրել առանց այդ իրավունքների, սակայն առավել կարճ ժամանակահատվածով, քան՝ իրավունքների առավել լայն շրջանակով, սակայն առավել երկար ժամանակահատվածով:

Միաժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ուսումնասիրվել են միջազգային չափանիշներ և միջազգային փորձ, որը վկայում է ազատությունից զրկված անձի իրավունքների, այդ թվում՝ ընտանիքի անդամների հետ տեսակցության իրավունքի ապահովման համար անհրաժեշտ երաշխիքների անհրաժեշտության մասին, որոնց վերաբերյալ մանրամասն վերլուծություն է ներկայացվել դատարանին:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ և 221.1 հոդվածների՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի կապակցությամբ

Հատուկ դիրքորոշման ներկայացման շրջանակներում ուսումնասիրվել են դատավարական ժամկետները և դրանց միատեսակ կիրառության հարցը: Պաշտպանի կողմից քննարկվել է այն, որ օրենքով դատական բողոքարկման համար 1 ամիս ժամկետ սահմանելով, նախատեսվել է այն ժամանակահատվածը, որի ընթացքում կողմն օբյեկտիվորեն հնարավորություն կունենա վճիռը բողոքարկելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ: Այս դեպքում հիշատակման է արժանի նաև այն կարգավորումը, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարկման պահից օրինական ուժի մեջ մտնելուց հետո, դատավարության մասնակիցներին ընձեռնվում է վերադասության կարգով դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման մեկամսյա ժամկետ, որը անհրաժեշտ է քննարկել հատկապես փետրվար ամսվա համար: Այսպես, փետրվար ամիսը բաղկացած է 28 օրից (նահանջ տարիներին՝ 29 օր) և եռօրյա ժամկետում դատական ակտը անձին տրամադրելու/ հասանելի դարձնելու դեպքում անձը կունենա համապատասխանաբար 25 և 26 օր նահանջ տարիների համար, ինչը խնդրահարույց է արդար դատաքննության իրավունքի և դատարանի մատչելիության տեսանկյունից:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների՝ «եզրափակիչ մասում» բառակապակցության ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցի վերաբերյալ

Հատուկ դիրքորոշմամբ անդրադարձ է կատարվել այն հարցին, թե Սահմանադրական դատարանի որոշման միայն եզրափակիչ հատվածում ամփոփված բովանդակությունը որպես նոր հանգամանք ընդունելը որքանով է ծառայում իր նպատակին և արդյոք ամբողջությամբ կարող է արտացոլել որոշմամբ արտահայտված Սահմանադրական դատարանի ամբողջական դիրքորոշումը: Սահմանադրական դատարանի որոշման

յուրաքանչյուր հատվածում ամրագրված դիրքորոշումները, վերլուծությունները և իրավական գնահատականները հարկ եղած դեպքում պետք է հավասարապես կիրառելի լինեն որպես նոր հանգամանք և դրվեն դատական ակտի վերանայման հիմքում:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերաքննիչ բողոքարկման տարբերվող կարգավորում նախատեսելը ուսումնասիրությունների արդյունքում խնդիրը քննարկվել է արդար դատաքննության իրավունքի իրացման տեսանկյունից: Խնդիրն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է վերաքննիչ բողոքի ձևական պայմաններ, որոնցից է նաև բողոք բերող անձի ստորագրության առկայության պահանջը: Վերջինս հետապնդում է բողոք բերող անձին իդենտիֆիկացնելու նպատակ և ուղղված է արդարադատության պատշաճ կազմակերպմանը: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 2-րդ մասը որպես նույն հոդվածի 1-ին մասի պահանջների չպահպանման հետևանք է սահմանում բողոքն առանց քննության թողնելը, ինչի արդյունքում անձը, փաստորեն, զրկվում է բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունից:

Նշված իրավիճակը դիտարկվել է արդար դատաքննության իրավունքի իրացման տեսանկյունից: Համեմատական վերլուծություն է իրականացվել նաև վերաքննիչ բողոքների կապակցությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգավորումների հետ, որոնց պարագայում վերաքննիչ դատարանները վերադարձնում են թերություններով բերված բողոքը, և անձը ունենում է վերաքննիչ բողոքի թերությունները շտկելուց հետո այն նորից ներկայացնելու հնարավորություն: Այսպիսի կարգավորումների առկայության պարագայում արդարացված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերաքննիչ բողոքարկման տարբերվող կարգավորում նախատեսելը՝ խոչընդոտելով արդար դատաքննության սահմանադրական իրավունքի իրականացումը:

5. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել զինծառայողների ծառայությունից կամ աշխատանքից ազատվելիս չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում ստանալու իրավունքի չապահովմանը: Խնդիրն այն է, որ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ «Զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով: Սույն մասում նշված դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինծառայողի՝ սույն օրենքի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը: Արդյունքում՝ օրենքի ընդունմամբ այն զինծառայողները, ովքեր հերթական արձակուրդից չեն օգտվել ավելի քան երկու տարի, զրկվել են չօգտագործած արձակուրդի դրամական հատուցում ստանալու իրավունքից, ուստի նաև խախտվել է վերջիններիս սեփականության իրավունքը: Հարցը դիտարկվել է խտրականության բացառման տեսանկյունից, քանի որ համանման իրավահարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտեր չեն նախատեսել նման սահմանափակումներ:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ

Հատուկ դիրքորոշման շրջանակներում ուսումնասիրվել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն

ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննարկումը մեղադրյալի կամ նրա պաշտպանի մասնակցությամբ դատական նիստով կատարելու կարգ չնախատեսելու խնդրի սահմանադրականության հարցը:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից վերլուծություն է ներկայացվել նաև դատական ակտերի պատճառաբանվածության հիմնահարցի վերաբերյալ: Փաստորեն, չապահովելով դատարանի առջև կանգնելու իրավունքը, անձը զրկվում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն կիրառելու վերաբերյալ հիմնավորումները և պատճառաբանությունները վիճարկելու հնարավորությունից: Վերջինս հատկապես խնդրահարույց է՝ հաշվի առնելով կալանք նշանակելու և կալանքի ժամկետը երկարացնելու դատարանների կողմից ձևավորված պրակտիկան այդ որոշումների պատճառաբանվածության տեսանկյունից:

7. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի, «Պետական տուրքի» մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգատներով ձևավորված պրակտիկայի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ

Անդրադարձ է կատարվել վարչական դատավարության ընթացքում գանձվող պետական տուրքի, պետական տուրքից ազատելու վերաբերյալ օրենքով նախատեսված կարգավորումներին, դրանց՝ դատարանների կողմից տրված մեկնաբանությանը:

Ձևավորված պրակտիկայի համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի հիմքով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելու փոխարեն դատարանները կիրառում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածը և բողոքաբերներին պարտավորեցնում վճարել պետական տուրքի գումարը այն դեպքերում, երբ բողոքաբերների կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու որոշման դեմ բերված բողոքը մերժվում է:

«Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենքի կիրառման ենթակա դրույթները չեն նախատեսում պետական տուրքի գանձման հնարավորություն: Այսինքն՝ նման հանգամանքներում դատարան դիմելու համար պետական տուրքի գանձում նախատեսված չէ օրենքով, իսկ նման հանգամանքներում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով պետական տուրքի գանձումը հակասում է իրավական որոշակիության սկզբունքից բխող կանխատեսելիության պահանջին:

8. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է վարչական և քաղաքացիական դատարանների միջև գործերի ենթակայության և ընդդատության հարցը: Ներկա կարգավորումները բավարար կերպով չեն ապահովում գործով հիմնական հարցի մասնագիտական և հատուկ ընթացակարգային լուծման հնարավորությունը, ինչը դիտարկվել է արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից:

9. ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցի վերաբերյալ

Հողի հարկը երեք տարվա ընթացքում չվճարելու և չորրորդ տարվա ընթացքում պարտքը չմարելու դեպքում հողամասի նկատմամբ իրավունքների հարկադիր կարգով դադարումը դատական կարգով Հողային օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված դրույթը հատուկ դիրքորոշման շրջանակներում դիտարկվել է սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքի և դրանից զրկելու համաչափության սկզբունքի տեսանկյունից: Բարձրաձայնվել է նաև հարկադիր կարգով իրավունքերի դադարման պարագայում անձի՝ չվճարված հողի հարկից ազատվելու չկարգավորման օրենսդրական բացի խնդրի մասին:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Ուսումնասիրվել են ՀՀ քրեական դատավարությամբ սահմանված վճռաբեկ և վերաքննիչ բողոքներ ներկայացնելու հիմքերը: Ըստ այդմ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներից ակնհայտ է դառնում, որ ի տարբերություն հիմնարար խախտման հիմքով վերաքննիչ բողոք բերելու հիմքով օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի՝ նույն հիմքով վճռաբեկ բողոք բերելը որևէ ժամկետով սահմանափակված չէ, եթե այն ուղղված է անձի վիճակի բարելավմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշյալ դրույթը քննարկվել դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների և դրանց սահմանափակման տեսանկյունից:

11. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համադիր վերլուծությունից հետևում է, որ որևէ տարբերակում առկա չէ հայցվորի (օրինակ պետական մարմնի)՝ հայցից հրաժարվելու հիմքով վարչական գործի վարույթը կարճելու դեպքերի համար: Նշված հիմքով վարույթը կարճելիս, միաժամանակ դադարեցվում է նաև նույն վարչական գործի շրջանակներում պատասխանողի համար ապացուցման հետագա գործընթացը: Հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով վարչական գործի վարույթի կարճման արդարացման վճռի կայացման անհնարինության հարցը դիտարկվել պատասխանողի համար արժանապատվության, պատվի ու բարի համբավի ապահովման տեսանկյունից: